Քննարկվել է հաստատության
Մանկավարժական խորհրդի
23.12.2022թ. թիվ 05
արտահերթ նիստում

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան

Քննարկվել է հաստատության
կոլեգիալ կառավարման խորհրդի
26.12.2022թ. թիվ 09
արտահերթ նիստում

Նախագահ՝ Ա. Եսայան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Գյումրի 2022

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Ծնողական խորհուրդը ստեղծվում է հաստատության գործունեությանն աջակցելու, ծնողների և հաստատության միջև համագործակցություն ապահովելու նպատակով:

1.2 Սույն կանոնադրությամբ սահմանվում են ծնողական խորհրդի իրավասությունները, աշխատանքների կազմակերման, անդամների ընտրության կարգը

1.3 Ծնողական խորհուրդը ամրապնդում է ծնողների և հաստատության միջև կապերը, մանկավարժական կոլեկտիվի և ծնողների կողմից ուսանողների դաստիարակության հարցում ձևավորում է միասնական պահանջներ

1.4 Ապահովում է ուսանողների իրավունքների պաշտպանությունը հաստատությունում

ԳԼՈՒԽ 2. ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաստատության ծնողական խորհուրդը իրավասու է.

2.1 հաստատության տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների մեջ թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ,

2.2 մասնակցել հաստատության վճարովի ծառայությունների կազմակերպման, պայմանագրերի կնքման և արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին

2.3 Կանոնադրության պահանջների խախտման դեպքում դիմել վերադասին

2.4 լսել տնօրենի հաղորդումը հաստատության գործունեության վիճակի ու հեռանկարների մասին, ստանալ նրանից ծնողներին հետաքրքրող պարզաբանումներ:

ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ուսումնական տարվա սկզբին ծնողներին ներկայացվում է ծնողական խորհրդի կարևորության գործունեության, նպատակների, խնդիրների, իրավասությունների մասին:

3.2 Յուրաքանչյուր կուրսից առաջադրվում կամ ինքնառաջադրվում են 3 անդամներ

3.3 Կազմակերպվում են ժողովներ, քննարկումներ առաջադրված անդամների մասնակցությամբ, որոնց ընթացքում յուրաքանչյուր կուրսից առաջադրված 3 թեկնածուներից մեկն ընդգրկվում է ծնողական խորհրդի կազմում

3.4 Ձևավորված կազմի անդամների մասնակցությամբ անցկացվում է փակ քվեարկություն

3.5 Քվեարկության արդյունքում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն ընտրվում է ծնողական խորհրդի նախագահ

3.6 Ձևավորված կազմից բաց քվեարկությամբ ընտրվում է քարտուղարը

ԳԼՈՒԽ 4. ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Ուսումնական տարվա սկզբում կազմվում է տարեկան աշխատանքների պլանը և նիստերի ժամանակացույցը(հավելված 1, 2)

4.2 Տարվա ընթացքում անցկացվում է 4-5 նիստ, անհրաժեշտության դեպքում հրավիրվում արտահերթ նիստեր

4.3 Հաստատության մանկավարժական խորհրդի քնարկմանն է ներկայացվում ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման վերաբերյալ առաջարկները/ծրագիրը/

4.4 Ուսումնարանի ծնողխորհրդի պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ

4.5 Ծնողական Խորհուրդն ապահովում է ծնողների ներգրավումը սովորողների արտաուսումնարանական և արտակուրսական դաստիարակությանը

4.6 Աջակցում է շնորհալի ուսանողների բացահայտման գործընթացին

4.7 Մշակում է խրախուսման մեխանիզմներ/ պարգևատրումներ, զեղչերով ծառայություններից օգտվելու հնարավորություններ/ և այլն:

4.8 Աջակցում է ազգային տոների համայնքային ակցիաների, շաբաթօրյակների կազմակերպմանը և անցկացմանը

4.9 Բացահայտում է ուսանող-ուսանող, ուսանող-դասախոս/վարպետ կոնֆլիկտները և աջակցում է այդ կոնֆլիկտների լուծմանը:

4.10 Աջակցում է ուսանողների հետաքրքրությունների և նախասիրությունների բացահայտմանը

4.11 Աջակցում է ուսանողների հանգստի ու ժամանցի կազմակերպմանը

4.12 Ծնողական համայնքին մասնակից է դարձնում ուսումնարանի գործունեությանը

4.13 Կազմակերպում է քննարկումներ և կլոր սեղաններ ծնողների, ուսանողների և դասախոս/վարպետների մասնակցությամբ

4.14 Բացահայտում է ուսումնարան չհաճախող, պարբերաբար բացակայող ուսանողների խնդիրները, աջակցություն ցուցաբերում տնօրինությանը և

մանկավարժական խորհրդին՝ դրանց լուծման գործում

4.15 Ուսումնասիրում է ուսումնարանի ուսումնադաստիարակչական առկա պայմանները և գնահատել կարիքները

4.16 Ներկայացնում է առաջարկներ ուսումնարանի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար

4.17 Համագործակցում է ուսանողական խորհրդի հետ՝ սոցիալապես անապահով ուսանողներին բացահայտման գործընթացներում

4.18 Մշակում է սացիալապես անապահով ուսանողներին օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ ծրագիր

4.19 Ապահովում է ուսանողի իրավունքների պաշտպանությունը ուսումնարանում

4.20 Բացահայտում է ուսանողների իրավունքների խախտման դեպքերը ուսումնարանում ուսանողների, դասախոս/վարպետների, իսկ տանը՝ ծնողների կողմից:

4.21 Ծնողական խորհրդի նիստերում կատարում է իրավունքների խախտման բացահայտված դեպքերի հետևանքների վերլուծություն և քննարկում, անհրաժեշտության դեպքում հարց է բարձրացնում մանկավարժական խորհրդում

4.22 Ապահովում է ծնողներին տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ

4.23 Ծնողներին իրազեկում է կրթության ոլորտում իրականացվող փոփոխություններին:

4.24 Ուշադրության կենտրոնում է պահում դժվար դաստիարակղող ուսանողներին և համապատասխան աշխատանք է տանում նրանց ծնողների հետ

4.25 Աջակցում է ուսումնարանում բաց դռների օր կազմակերպելու աշխատանքին, ապահովում ծնող-դասախոս/վարպետ կապը

4.26 Կլոր սեղան զրույց-զեկուցումներ է ներկայացնում՝ ուղղված ակոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների, և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելուն և դրանց վնասներին

4.27 Մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը

4.28 Բացահայտում է ուսանող-ուսանող, ուսանող-մանկավարժ կոնֆլիկտները և աջակցել այդ կոնֆլիկտների լուծմանը:

4.29 Բացահայտում է հնարավոր հովանավորներին և նրանց հետ հաստատել կապեր:

4.30 Տարեվերջում ներկայացվում է հաշվետվություն կատարած աշխատանքների վերաբերյալ

ԳԼՈՒԽ 5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 սույն կանոնակարգը հրապարակվում է ուսումնարանի պաշտոնական կայքում

5.2 սույն կանոնակարգը տարածվում է՝ այն կիրառման մեջ դնելուց հետո ծագած հարաբերությունների վրա

5.3 կանոնակարգը վերանայվում, փոփոխության է ենթարկվում ըստ անհրաժեշտության

5.4 Կանոնակարգը քննարկվում է մանկավարժական խորհրդի նիստում, հաստատվում կամ նրա մեջ փոփոխություններ կատարվում են ուսումնարանի կառավարման խորհրդի որոշման հիման վրա

Հավելված 1. Ծնողական խորհրդի տարեկան աշխատանքների պլան

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու	Ժամկետ	Նշումներ
1.	Ծնողական խորհրդի 2022-2023 ուստարվա աշխատանքների հաշվետվություն: Ծնողական խորհուրդների թվակազմի հաստատում:			
2.	Ծնողական խորհրդի նախագահի և անդամների ընտրություն			
3.	Ծնողական խորհրդի նախագահի ընտրություն			
4.	Հաստատության մանկավարժական խորհրդի քնարկմանը ներկայացնել ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման ծրագիր:			
5.	Ուսումնարանի ծնողխորհրդի պարբերաբար հանդիպումների կազմակերպում			
6.	Ապահովել ծնողների ներգրավումը սովորողների արտաուսումնարանական և արտակուրսական դաստիարակությանը:			
7.	Աջակցել շնորհալի ուսանողների բացահայտման գործընթացին:			
	Աջակցել միջուսումնարանական, մարզային,հանրապետական օլիմպիադաների,մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպմանը:			
8.	Մշակել խրախուսման մեխանիզմներ /պարգևատրումներ, զեղչերով ծառայություններից օգտվելու հնարավորություններ/ և այլն:			
9.	Աջակցել ազգային տոների, համայնքային ակցիաների, շաբաթօրյակների կազմակերպմանը և անցկացմանը:			
10.	Բացահայտել ուսանող-ուսանող,			

	ուսանող-դասախոս/վարպետ կոնֆլիկտները և աջակցել այդ կոնֆլիկտների լուծմանը:			
11.	Ուշադրության կենտրոնում պահել ուսանող-ուսումնարան-ծնող համագործակցությունը:			
12.	Աջակցել ուսանողների հետաքրքրությունների և նախասիրությունների բացահայտմանը, խմբակների աշխատանքներին:			
13.	Մասնակցել ուսումնարանի ներքին գնահատման գործընթացին:			
14.	Ծնողների շրջանում անցկացնել հարցումներ:			
15.	Աջակցել ուսանողների հանգստի ու ժամանցի կազմակերպմանը:			
16.	Ծնողական համայնքին մասնակից դարձնել ուսումնարանի գործունեությանը:			
17.	Կազմակերպել քննարկումներ և կլոր սեղաններ ծնողների, ուսանողների և դասախոս/վարպետների մասնակցությամբ:			
18.	Աջակցել ուսումնարանին պարտադիր կրթության իրականացնելու հարցում:			
19.	Բացահայտել ուսումնարան չհաճախող, պարբերաբար բացակայող ուսանողների խնդիրները, աջակցություն ցուցաբերել տնօրինությանը և մանկավարժական խորհրդին՝ դրանց լուծման գործում:			
20.	Մասնակցել ուսուցչի կողմից ուսանողի պարտադիր նվազագույն գիտելիքների գնահատման գործընթացին:			
21.	Ուսումնասիրել ուսումնարանի ուսումնադաստիարակչական առկա պայմանները և գնահատել կարիքները:			
23.	Ներկայացնել առաջարկներ ուսումնարանի			

	նյութատեխնիկական բազան հարստացնելու համար:			
24.	Համագործակցել ուսանողական խորհրդի հետ՝ սոցիալապես անապահով ուսանողներին բացահայտման գործընթացներում:			
25.	Մշակել սացիալապես անապահով ուսանողներին օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ ծրագիր:			
22.	Ապահովել ուսանողի իրավունքների պաշտպանությունը ուսումնարանում:			
23.	Բացահայտել ուսանողների իրավունքների խախտման դեպքերը. ուսումնարանում ուսանողների, դասախոս/վարպետների, իսկ տանը՝ ծնողների կողմից:			
	Ծնողական խորհրդի նիստերում կատարել իրավունքների խախտման բացահայտված դեպքերի հետևանքների վերլուծություն և քննարկում,անհրաժեշտության դեպքում հարց բարձրացնել մանկավարժական խորհրդում:			
27.	Կազմակերպել սեմինարներ ծնողների համար «Ուսանողների իրավունքները» թեմայով:			
28.	Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ:			
29.	Ծնողներին իրազեկել կրթության ոլորտում իրականացվող փոփոխություններին:			
30.	Ուշադրության կենտրոնում պահել դժվար դաստիարակղող ուսանողներին և համապատասխան աշխատանք տանել նրանց ծնողների հետ:			
31.	Ծնողական խորհրդի կողմից հսկողություն սահմանել սովորողների սննդի			

Հավելված 2. Նիստերի ժամանակացույց

Թիվ	Նիստերի օրակարգ	ժամկետ	Ծանոթագրություն
1.			
2.			
3.			
4.			